

ՇԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Շուշան Խաչատրյան, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հեռակա ասպիրանտ, ՀՅԹԻ հուշագրությունների և վավերագրերի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտական աշխատող: Պատրաստում է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայոց ցեղասպանության հետազոտման կրոնագիտական խնդիրները» թեմայով: Ուսումնասիրություններ՝ Օսմանյան կայսրության կրոնական իրավիճակի, կրոնների բախման, ցեղասպանության աստվածաբանության, Հուրքոստի փիլիսոփայության ոլորտներում:

Սուրեն Մանուկյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: 2012-2013 թթ. Ֆուլբրայթ հետազոտական ծրագրի կրթաթոշակառու: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության սոցիալ-հոգեբանական ասպեկտը և համեմատական ցեղասպանագիտություն:

Գոհար Խանումյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդերի պատասխանատու: Ուսումնասիրության թեման է «Որբահավաք աշխատանքներն Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության տարիներին»:

Նարեկ Պողոսյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող: Գիտական հետազոտության թեման է Հայոց ցեղասպանության հիմնախնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի գիտական ժառանգության մեջ:

Միհրան Մինասյան, ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հուշագրությունների և վավերագրերի ուսումնասիրության բաժնի վարիչ: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության երկրորդ փուլը (Միրիայի տարածքում), հայ գրքի և ձեռագրերի պատմություն, հալեպահայ գաղթօջախի պատմություն և այլն: Յոթ մենագրության և բազմաթիվ հոդվածների հեղինակ է:

Քրիստինե Նաջարյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող: Զբաղվում է արևմտահայության կրթական կյանքով:

Տաթևիկ Ղալթախյան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական աշխատող, Գրադարանի և արխիվի բաժնի վարիչ: Զբաղվում է 1908-1914 թթ. Արևմտահայ մամուլի պատմության ուսումնասիրությամբ: